State of California—Health and Human Services Agency
California Department of Public Health

MARK B HORTON, MD, MSPH
Director

ARNOLD SCHWARZENEGGER
Governor

Ձեր և Ձեր Մանկան Պաշտպանությունը

Եթէ յղի էք կամ կարծում էք, որ յղի կարող էք լինել, պէտք է իմանաք ՄԻԱՎ-ի (HIV) մասին, որը ՁԻԱՀ (AIDS) առաջացնող յարուցիչն է:

Յղիությունը ժամանակ է, որ հոգ տանէք ինքներդ ձեզ և ենթարկուէք կանոնաւոր բժշկական ստուգումների, ձեր և ձեր մանկան առողջութեան համար: Ձեզ առողջական խնամք մատակարարողը ձեզ հարցեր կտայ և կստուգի ձեր վիճակները, որպէսզի դուք և ձեր մանուկը լինէք ինչքան հնարաւոր է առողջ: Որպէս ձեր սովորական նախածնական խնամքի բաղադրամաս, կամ երբ երկունքի կամ ծննդաբերութեան վիճակում էք գտնուում, ձեզ կստուգեն ՄԻԱՎ-ի համար, բացի եթէ մերժէք: Կանուխ յայտնաբերումը և բուժումը ձեր լաւագոյն ընտրանքներն են: Յղիութեան ժամանակ ՄԻԱՎ-ի ստուգումը լաւագոյն ընտրանքն է ձեզ և ձեր մանկան համար:

Ի՞նչ է ՄԻԱՎ-ը
Մարդկային Իմունոանբաւարարութեան Վիրուսը (HIV) մի հիւանդութիւն է, որը տկարացնում է իմուն կամ դիմադրողական համակարգը, դժուարացնելով մարմնի պայքարը վարակների դէմ:

ՄԻԱՎ-ը ինչպէ՞ս է փոխանցւում
ՄԻԱՎ-ը հիմնականում տարածւում է չպաշտպանուած սեռական յարաբերութեան միջոցով, կամ օգտագործելով այն նոյն ասեղը, որով սրսկուել է ՄԻԱՎ-ով վարակուած մի անձ: ԱՄՆ-ում կանանց մեծ մասը ՄԻԱՎ-ով է վարակուել տղամարդկանց հետ սեռական յարաբերութեան միջոցով:

ՄԻԱՎ-ով վարակուած յղի մի կին, որը ՁԻԱՀ ունի, կարող է յղիութեան ժամանակ, ծննդաբերութեան պահին և կրծքով կերակրելիս ՄԻԱՎ-ը փոխանցել իր մանկան:

ՄԻԱՎ-ի ստուգումը ինչպէ՞ս կօգնի իմ մանկան
ՄԻԱՎ-ի ստուգումը կօգնի ձեր մանկան՝ ձեզ զգուշացնելով, որ ձեզ դարմանում է հարկաւոր՝ եթէ ձեր ՄԻԱՎ-ի ստուգումը դրական է: Յղիութեան, երկունքի կամ ծննդաբերութեան ընթացքին բուժումը կօգնի ձեր մանկան ՄԻԱՎ փոխանցելու վտանգի նուազեցման:

Բժիշկները գիտեն, որ եթէ ՄԻԱՎ-ով վարակուած լինէք, պատշաճ դեղերով բուժումը կարող է մեծապէս նուազեցնել ՄԻԱՎ-ը ձեր մանկան փոխանցելու հնարաւորութիւնը:

Ի՞նչ անել եթէ ՄԻԱՎ ունեմ
Եթէ ՄԻԱՎ ունէք, երևի ցանկանաք ձեզ առողջական խնամք մատակարարողի հետ քննարկել բուժման ընտրանքները: Նրանք շատ հաւանաբար կյանձնարարեն դեղեր, որոնք անվտանգ են նկատւում յղիութեան դէպքում: Թերևս ձեզ քաջալերեն, որ դեղը շարունակէք ծննդաբերութիւնից յետոյ՝ ձեր սեփական առողջութեան համար, նայած մի շարք գործօնների:

Ինքներդ ձեզ կարող էք պաշտպանել ՄԻԱՎ-ի դէմ՝

- Օգտագործելով լատեքսից/պոլիուրեթանից պահպանակ (տղամարդի կամ կանացի) սեռական յարաբերութիւն ունենալիս, մինչև անգամ եթէ յղի էք: Օգտագործէք միայն ջրային հիմքով քսանիւթեր: Իւղային հիմքով քսանիւթերը կտկարացնեն պահպանակները և նրանք կդարձնեն նուազ արդիւնաւէտ:

- Սրսկող դեղերի, ստերոիդների, վիտամինների, թաթու դրոշմելու կամ մարմինը ծակելու համար ուրիշի օգտագործած ասեղները չօգտագործելով:

Օգնութեան այլ աղբիւրներ
Զանգահարէք Կալիֆորնիայի ՄԻԱՎ/ՁԻԱՀ Հրատապ Գծին 1-800-367-2437 (AIDS) ՄԻԱՎ-ի յղումների և խորհրդատու աղբիւրների, այդ թւում և ձեր շրջանում նախածնական ՄԻԱՎ-ի բուժման մասնագէտների համար: